

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Է

ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔԸ
ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1977,

(ՊՍԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊՍԴԵՅՅԻՑ)

ԳՐԵՑ Մ



Մ Ա Ր Ս Է Յ Լ

ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻԱՆ
Marseille.— Imp. Schickler et Pignatet, r. Vacou, 50

1889

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լինչի օրէնք (Lynch-law) կը կոչուի Ամերիկայի Միացեալ-Նահանգներին մէջ ժողովրդին կատարած դատաստանն որով ժողովուրդն ինք կը պատժէ անմիջապէս այն տեսակ յանցաւորներն որոնք երկրին մէջ հաստատուած կառավարութիւնը չկրնար կամ չուզեր պատժել օրէնքով: *

* «Լինչի օրէնք» բառին ծագմանը համար այսպէս կը պատմուի: ԺՉ դարին մէջ Հիւսիսային Ամերիկայի Քարօլին նահանգը շատ անգամ կենթարկուէր այնպիսի անկարգութիւնների որոնք կրնան պատահիլ մի նորահաստատ գաղթականութեան մէջ և որոնք զսպելու անզօր կը գտնուէր օրէնքը: Գաղթականները իրենց հայրենակիցներէ ճօն Լինչին իրաւունքներ տուին տեղնուտեղը պատժելու համար այդպիսի կարգի կանոնի չեն-

ՀԲ 2708

42204-60

կառավարութիւնները և օրէնքները հաստատուած են ժողովրդի պահանջութեանը և բարեկեցութեանը հոգ տանելու համար . երբ իրենց այդ պարտք չկատարեն, իրենց գոյութեան իրաւունքն ալ կը կորսնցունեն և այդ ժամանակ ժողովուրդն կը հարկադրուի ինք ուղղակի հոգ տանիլ իր պաշտպանութեան և պահանջութեան: Ինչպէս ամեն մէկ մարդ անբռնաբարելի իրաւունք ունի իր վրայ յարձակողին դէմ իր անձ պաշտպանելու,

թարկուող յայտնի եղեռնագործներն, զանոնք ձեռք անցուցածին ոչէս ձեծեւրով, սպաննելով կամ կախելով: Այդ պատճառով Աինչի օրէնք կոչուեցաւ այդ դրութիւն որ յետոյ Ամերիկայի զանազան տեղերն ալ երբեմնակի գործադրուած կը տեսնուի և դեռ մինչեւ այժմ ալ կը պատահի երբեմն որ ժողովուրդը կը գործադրէ բացառիկ դէպքերի մէջ երբ կառավարական օրէնքը չափազանց թոյլ և դանդաղ գտնուի:

նոյնպէս ամեն ժողովուրդ իրաւունք ունի իւր հաւաքական անձնապաշտպանութեան, և այդ ի հարկէ այնպիսի երկիրների մէջ ուր իրեն պաշտպանող օրինաւոր կառավարութիւն չկայ:

Տաճկահայաստանի մէջ ուր օրէնքը մեռած տառ է միայն և կառավարութիւնն յայտնի համարձակ կը պաշտպանէ ժողովրդի հարստահարիչներն և մինչեւ իսկ գողերն և աւազակապետներն սրոնք անպատիժ կը կողոպտեն, կտաննեն և ողջ ողջ կայրեն Հայերն, այդ խեղճ ժողովրդին ուրիշ բան չմտար անել բայց եթէ ուղղակի ինք կատարել իր հարստահարիչների դատաստանը:

Այդպիսի դրութեան մէջ ուր կը գտնուին այժմ մեր հայրենակիցներ, կը յուսանք թէ քիչ հետաքրքրական չլինիր վերստին կարդալ «ԼԻՆՁԻ ՕՐԷՆՓԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» վերնագրին

Դ

տակ զբուած այն վտ.քրիկ պատկեր
որ հրատարակուած է Արմենիա լրա-
գրի Ա տարէջըջանի 78 , 79 , 80 և 81
թուերի Բանասիրական բաժնին մէջ և
որ այժմ առանձին տետրակով եւս կը
հրատարակենք , մեր բարեկամների
խնդրանքին համեմատ :

1889 Օգոստ. 3/15

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆ

Մարտէյլ

ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔԸ

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՊԱՏԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԳՍՅԻՅ)

Ա.

Գարուն էր : Կուսական անտառը
ներդաշնակ ելեւէջով , նոր բարձրա-
ցած հովի շունչից , մեղմ սօսաւիւնով
ողջոյն էր տալիս առօրէ , երիասարդ-
բնութեանը : Պարզ երկնակամարի վե-
րայ ազօտ փայլում ու պլպլում էին
վերջին աստղերը և թալկացած լու-
սինը խոնարհել էր հորիզոնին : Եր-
կինքը սկսել էր գունատել , բայց
հորիզոնը գեռ կապոյտ էր : Շուրջը
խորհրդաւոր լռութիւն էր տիրել .
միայն ժամանակ առ ժամանակ , հե-

ուսուր սոխակի վերջին դայլալիկների արձագանքն էր լսվում: Ծառերի հսկարտ, սաղարթախիտ գագաթները կարծես երկնքին էին կպել: Մութը, ստանական մութն էր անտառի խորքը. ոչ մի բան չէր կարելի նկատել... Ծառերի բունները այս ու այն տեղ հրէշային խուճերի հանդէս էին կարծես կազմում: Ակամայ սարսուռ էր գալիս մարդու վերան նորանց տեսնելով: Ոչ ոք սիրտ չէր անի գալ և, մանաւանդ գիշերը, մտնել այդ անտառը...

— Յտեսութիւն, յանկարծ լուսեց մի խոպոտ ձայնով այս սարսափեցուցիչ լուսութեան մէջ. — բայց էլի ըզգուշութիւնը ձեռնից մի՛ թռչնէք...

— «Յտեսութիւն» լուսեց մի տաստասն և հինգ հոգու պատասխանը, և մի շարժուն, սեւ խումբ դուրս եկաւ անտառի խորքից...

Բ

Վան քաղաքը նոր էր զարթել: Սրեգակը իւր առաջին ճառագայթները արձակել էր Վարագայ լեռան գագաթին և ցնցուղի նման տարածուել էր կանաչախիտ և ծաղկաւէտ արօտների վերայ. ծիրանի գոյներով փայլվում էին ցօղի կաթիլները: Քրիստոսի—յուսոյ նշանը իւր սիրոյ և մութեան ճաճանչները Վարագայ վանքից արձուխ նման խոյացնում էր խաւար Հայրենիքի վերայ և ազատութիւն կարծես աւետելիս լինէր... Ամեն մարդ առողջ օգը շնչելով, ուրախ զուարթ իւր գործին էր շտպում... բայց մի առանձին շարժում և իրարանցումն էր երեւում թիւրք պօլիցիականների մէջ. նոքա վազվզում էին այս այն կողմ, և պատրաստում էին զանազան դուքանների սիւներին կպցրած հարիւրաւոր գունա-

ւոր յայտարարութիւնները , որպէս զի
ժողովուրդը ժամանակ չունենար նու-
րանց կարգալու . . :

Մի խումբ մարդիկ հաւաքուած
արհեստաւոր Մկրտի դուքանի առաջ,
հետաքրքրութեամբ լի , ճգնում էին
կարգալ այդ յայտարարութիւններիցը
մին , որի մի քանի խօսքերը մէջ ընդ-
մէջ , սլօխիցիականի սաստիկ շտապե-
լու շնորհիւ , մնացել էին սիւնի վերայ . .

— Թողէ՛ք , թողէ՛ք Մելոն կար-
գայ , նա լաւ է կարգում , ասում էր
մինը :

— Դէ՛ դէ , շուտ արէ՛ք , ով ու-
ղում է լինի , թէ չէ հիմա կ'գան և
այս էլ կ'ոչնչացնեն , ասում էր միւսը :

— Աղբէր , ինչ էք ժամանակ կոր-
ցնում . էլ ինչ ես սպասում , դէ՛
քեզ տեսնեմ , Մելոյ :

Առաջ անցաւ Մելոն , մատը դրեց
սիւնին և սկսաւ ուշադրութեամբ
յայտարարութեանը մտիկ տալ :

— Այստեղը պատուած է՛ , չէ՛
հասկացվում , և . . .

— Տօ՛ դու կարգա՛ , ինչ ուղում
է լինի :

— Լսեցէ՛ք ուրեմն . արիւն ձեր -
ի գլուխ ձեր :

« . . . թիւն : »

« . . . ր . . . խորհ . . . վճուե . . . Սար

« . . . Կի . . . ոս . . . ին . . . խեղդամահ

« . . ել : Վաս . . . ես . . . ն . . . կախել .

« . սկ Մ . . . խողխողե . . . : Թո . . .

« յայտնի լի որ . . . այս է

« բոլ . . . ազգ . . դաւաճ . . . և մատն . .

« վիճա . . . : Արդարու . . . ժամ . .

« հնչ . . . ց : Զարհուրեց . . . ո՛վ խաւար

« . . . ներ :

« Լին . . . Օրին . . . : ր . . . ր : »

Մի պաղ սարսուռ անցաւ բոլորի
մարմնովը . . . ոչ ոք չէր համարձակ-
վում ձայն հանել : Թէեւ ոչ մինն էլ
յայտարարութեան իմաստը կատարե-
լապէս չէր հասկացել , բայց ամենքն

էլ զգում էին, որ մի ինչ որ անսովոր բան պատրաստվում էր տեղի ունենալու . . . : Մի բան միայն պարզ էր, որ «խողխողել» և այլն խօսքերը վերաբերում էին քաղաքի թէ գերքով և թէ փողով նշանաւոր ազգայիններէն մի քանիսին—էֆէնդիներին. բայց նոցա վերայ էլ ո՞վ կ'յանդգնէր ոչ թէ ձեռք բարձրացնել՝ այլ և մի անզգոյշ խօսք փախցնել, նոցա արքանեակլրտեսները ցրուած էին ամեն կողմը . . . : Բոլորն էլ լուռ էին, բոլորի էլ հարցական հայեացքները ձիմեանց երեսին էին ուղղուած. նոքա զարմացած լուում էին, կարծես սպասելիս լինէին՝ որ ոք մին բացատրէր այդ խորհրդաւոր յայտարարութեան խմաստը . . . : Նոքա արդէն պատրաստվում էին հեռանալ — ցրուիլ, երբ յանկարծ

— Զարմանալու ոչինչ չկայ այստեղ, սա բնական բան է. — խօսեց մի բարձրահասակ, սեւ աչք ու ուն-

քով, մազ ու բեխերով, արծուեռունգն, թիկնաւէտ, եափունջին գլխին քաշած, ոտին չուստ՝ մի երիտասարդ, որի աչքերը հուր ու բոց էին ցայտում, կիտած ունքերն ու դաժան դէմքը՝ դաղանի, ներքին, հազիւ նկատելի սրտմտութիւն : Նա օգտուելով ամբոխի հետաքրքրութիւնից, աննկատելի կերպով մօտեցել էր նորանց և յայտնի նպատակով կանգնել էր ամենից ետեւը :

Վ Բոլորի երեսը նորան դարձաւ ամբոխը սառեց մնաց. ոչ ոք չէր ճանաչում, ոչ ոք չէր էլ տեսել նորան. ո՞վ էր դա . . . : — Մինչեւ ե՞րբ անպատիժ մնան այդ ստոր արարածները, շարունակեց նա խօսքը. բաւական չէ՞ ինչ համբերեցինք. ժամանակ է վերջապէս զգացնելու, որ մենք մեռած չենք, և եթէ լուում ենք, այդ նրանից չէ որ մենք չենք նկատում. արդարութեան ժամը հասաւ. նոքա պա-

տասխանատու են իրանց արարքներին :
 Գանի՛ քանի՛ անմեղ , աղնիւ և հայ-
 րենիքի գործին անձնանուէր երիտա-
 սարդներ հալածական են հայրենիքից ,
 քանի՛ քանիսը հիւժեալ , վշտահար
 տառապում են մահառիթ բանտի խոր ,
 մութ , խոնաւ անկիւններում . նոցա
 հառաչանքը վրէ՛ժ է գոռում , նոցա
 շղթան՝ ազատութիւն և ճշմարիտ հա-
 յերին արտասուքը արիւն որոտում ...
 Ո՛ւր է մեր Հայրիկը , մեր սիրելի ,
 պաշտելի Հայրիկը . այսօր նա էլ է
 արդիւուած Պօլսի մէջ իբրեւ մի չա-
 րագործ ... և այս ամենը , ամենը դո-
 ցա , այդ մատնիչների երեսօից ... : Հայ-
 րենիքը գերի էր և նոքա ստբուկ
 դարձրին նորան . մեր դիւզացու , նոյն
 իսկ ձեզանից շատերի մաքուր արիւնը
 այդ ցածհոգի արարածները չե՞ն որ
 ծծում են անիրաւաբար , լըրաբար .
 թիւրք փաշան մեզ այնքան չ՛կեղե-
 քեց , ինչքան դոքա , այդ անհոգի ,

զաղրալի աղա-էֆէնդիները . . . : Աղ-
 գային անկախութիւն ենք պահան-
 ջում . բայց միթէ մի ազատ քայլ թող-
 նո՛ւմ են դոքա մեզ անելու . . . ա՛խ ,
 մեր ցեցը , մեր ցաւը , մեր շղթան
 դոքա են . այո՛ , դոքա , և եթէ դո՛ւք ,
 իմ սիրելի , իմ լսնկելի հայ եղբայր-
 ներ , ուզում էք մի փոքր ազատ շունչ
 քաշել , մի օր ազատուած տեսնել մեր
 թշուառ բայց անզուգական հայրե-
 նիքը , թօթափեցէք նախ ստրկու-
 թեան շղթան , և ապա գերութեանը
 հեշտ է . նախ . . .

Պօլիցիականների վերայ հասնելը
 ընդհատեց խօսակցութիւնը . . . երի-
 տասարդը անյայտացել էր :

Գ

Այդ դէպքից անցել էր երկու օր :
 Արեգակը մօտենում էր իւր մուտ-
 քին . ահագին հրեղէն գունդը կար-
 ծես վերջին անգամ էլ ուզում էր ցոյց

տալ իւր բոլոր փառահեղութիւնը :
Սրեւմտեան հորիզոնը կրակ էր առել
— բռնկել . ահագին լուսոյ շիթերը
թափանցելով պայծառ ամպերի միջից ,
լուսաւոր շառաւիղներով ընկել էին
արեւելեան երկնքի վերայ և մի գե-
ղազուարճ տեսարան էին կազմել :
Լեռների գագաթները ոսկու ձուլա-
ծոյ էին դարձել : Թեթեւ փետրային
ամպերը , երեկոյեան բարձրացող հո-
վից հալածուելով — յամրաքայլ խոյս
էին տալիս երկնքից Ֆանտաստիկական
և իրական պատկերներ կազմելով և
նորից քանդելով : Քանի արեգակը
անյայտանում էր , նոյն աստիճանով
էլ ծովից փչող հողմը էր աւելանում . . . :
Միմեանց ետեւից վառվում էին երկ-
նային լուսատուները — նախ թոյլ
պլպլոցով , բայց յետոյ աւելի և աւելի
զօրքով : Բայց լուսինը չէր երեւում . . . :
Սղջամուղջը պատեց երկիրը , և ցե-
րեկուայ երկար աշխատանքից յետոյ ,

ամեն բան հանգիստ էր պարում :

Գիշերային կիսամութի մէջ հսկա-
յական դուռըթեամբ բարձրանում
է Գրգուռ լեռը , որի հարաւային
կողմը — լերկ ժայռ , մտնում է Վա-
նայ Ծովակի մէջ : Գիշերային խաղա-
ղութեան մէջ , կարծես աւելի և ա-
ւելի սփռվում էր խոտերի և ծաղիկ-
ների բուրմունքը . . . :

Ծովափին , նեղ շաւիղով , դէպի
լեռն էր շտապում մի հսկայ . դա մի
երիտասարդ էր ոտքից գլուխ զինուոր-
ուած . Պիբօդի Մարտէնի հրացանը
ձեռին , կողքին խէնջար և ջուխտ ա-
տրճանակն էլ կշտին կախ : Նա շտա-
պում էր և յաճախ էլ ետին դառ-
նում , և վերջապէս բոլորովին անյայ-
տացաւ և տեղի տուեց ահագին որ-
ձաքարերի կտորտանքներին : Բայց ե-
րիտասարդը չէր կանգնում . նա թէև
արագ-արագ էր շնչում և արիւն
քրտինք մտել , բայց և այնպէս և ոչ

մի ըոպէ առանց հանգստանալու և կարծես առ ոչինչ համարելով ճանապարհի դժուարութիւնները, դիմում էր իւր նպատակին... քարակոյտերին փոխարինեցին համարեա ուղղահայեայ ժայռեր. ուր ուրեք հազիւ նըկատելի և միմիայն այծեղջիւրներին մատչելի քանդուածներ էին երևում... բայց երիտասարդը յամառութեամբ բարձրանում էր՝ դիմհար տալով իւր հրացանի փողին... : Վերջապէս նա հասաւ լեռան կիսին, նորա առջ բացուեց մի մութը, խոր և նեղ ձոր թէ անդունդ, անմատչելի, սեպածև ժայռերով չըջապատած... : Սյտեղ նա կանգնեց արդէն և կարծես տատանման մէջ էր... մատները գրեց բերանին և պայմանական չվժոցը արձակեց : Մի թոյլ, կարծես գետնի տակից դուրս եկող սուլոց եղաւ նորա պատասխանը... : նա այլ եւս չերկմտեցաւ և արագութեամբ իջաւ ցած :

Հազիւ երբեմն ցայտող և մի ակնթարթ ժայռերն առկայծող լոյսը ցոյց տուաւ նորան՝ իւր ոտի տակ բացուած անյատակ անդունդը և նորից մնաց խաւարի մէջ :

Ներքեւը ժէռայրի մէջ, պայծառ խարոյկի շուրջ դիզուած տասն տասն և հինգ հոգի խօսակցում էին. բայց դա երկար չէր քաշում և ստէպ լըռում էին և ականջ դնում. յայտնի է որ մի բանի կամ մի ոքի են սպասում...

— Երեւի մի բան է պատահել. յայտնի անհանգստութեամբ ասում էր մինը :

— Պէտք է տեղեկանալ. նա երբէք անճիշտ չէր գտնուի, եթէ մի զօրաւոր արգելք ելած չլինի... աւելացնում է միւսը :

— Եկէք մի քանի հոգի գնանք... : Հէնց այն է : Միօն, Վասօն ու Միխակը պատրաստվում էին վեր կենալու, որ վերելից լսուեց չվժոցը և բո-

լորի երեսը ուրախութեամբ փայլեց . բոլորի՝ բացի մինից , որը մի կողմ քաշուած , տխուր , ամբողջապէս ետփունջու մէջ թաղուած գուճ էր եկելը . . . գունաթափ դէմքը , վհատ աչքերը՝ որոնց երբեմնապէս դաղտուկ ձգում էր իւր ընկերների վերայ , ցնցումը՝ որ նա զգաց շվիցի ձայնից — բոլորովին հակապատկերն էին կամչում միւս ընկերներին : Մի՞թէ մի բանի մէջ իրան մեղաւոր էր զգում իւր ընկերների առաջ , մի՞թէ խղճմտանքն էր տանջում , կամ գուցէ յիշեց իւր սիրուհուն . . . ո՞վ գիտէ . . . ո՞վ գիտէ . . .

— Ուրախ եմ որ բոլորդ էլ այստեղ էք , առայ նորեկ երիտասարդը , որը ինչպէս երեւում է , խմբի առաջնորդն էր , և իւր արծուի աչերը աբազութեամբ չորս կողմ ձգեց : Բոլորը լռեցին . նորա խոփուած դէմքը ահաւոր է այդ միջոցին :

— Քիչ էր մնում որ ստոր մատ-

նութեան զոհ լինէինք . այս օրուայ ժողովը ես գիտութեամբ այստեղ նշանակեցի , որովհետեւ այն « որը » (անտառ՝ ուր ժողովուել էին առաջին անգամ) այս րոպէիս արդէն պաշարուած է թիւրք զինուորներով . մատնիչը ոչ իմացաւ այս վերջին վճիռս : Ինչ եւ իցէ , այժմ , գոհութիւն Աստուծոյ , ամեն բան ուղղուեցաւ , շարունակեց նա , և իւր կողքի երկու հուժկու երիտասարդների ականջին մի բան փոփոսց : Նոքա վեր առին ատրճանակները , շնիկները բացին և մօտեցան Կիրակոսին (այդպէս էր առանձին տխուր նստած երիտասարդի անունը) : Բոլորի դէմքն էլ խորհրդաւոր և լուրջ արտայայտութիւն ստացաւ . Կիրակոսը կարծես տեղն ու տեղը սառեց :

— Ուշացայ , որովհետեւ պէտք էր մի քանի բան էլ կարգադրել . . . մեր միւս ընկերները քնած չեն , մատ-

նիչը մեղանից մինն է, և նա պէտք է որ այսուհետեւ մեր մէջ չմնայ, բայց չպէտք է որ ապրի էլ. պարզ է թէ ինչի՞. ի՞նչ անենք, հարցրեց նա ընկերներին:

— Կորչի՛ մատնիչը, գոռացին բոլորը միաբերան, և արձագանքը, ամենի ժայռերի արձագանքն էլ կարծես հազարաւոր բերանից և հազարաւոր կողմերից ահռելի ձայնով «կորչի՛ մատնիչը» պատասխանեց:

— Բռնեցէ՛ք, տղա՛յք, մատնիչին և կապկպեցէ՛ք:

Մի ակնթարթում Կիրակոսի ձեռներն ու ոտները կապուած էին:

— Այժմ արդէն լսեցէք իրողութիւնը... և նա ծոցիցը հանեց մի ճմրթկուած թղթի կտոր. դա Կիրակոսի տեղեկագիրն էր փաշային ուղղած... բայց թէ ի՞նչպէս էր իւր ձեռքը անցել դա՛... այդ միայն ինքը գիտէր:

Բոլորն էլ ճանաչում էին Կիրակոսի գիրը. մատնութիւնը ակնյայտնի էր:

— Վերջացրէք դորա գործը, կրկին խօսեց երիտասարդը. — և շուտ վերադարձէք: Ահա այնտեղ, վերը՝ դէպի աջ խոր անդունդը, գլորեցէք դէպի ցած. երեւի շուտով (և այստեղ նորա դէմքը արհամարհական ծիծաղ արտայայտեց) իւր ընկերներին էլ կուզարկենք ետեւիցը. միայնակ չի մնալ...:

Այդ միջոցին դուրս եկաւ լուսինը և խորհրդաւոր հայեացք ձգեց այս խորհրդաւոր խմբի վերայ և կրկին ծածկուեցաւ ամպերի տակ: Հեռուն, շատ հեռուն լուսեց ամպի խուլ որտաւը և երկինքը սկսաւ կամայ կամայ ամպերով ծածկուել...:

Խուժքը խորհրդի նստաւ...:

Դ

Կէս գիշերը վաղուց էր անցել:

1927
1461

Սեւ սեւ ամպերը պատել էին երկինքը : Բամին սաստկութեամբ մընչում էր : Վանայ Ծովակի փրփրազէզ արիքները կատապարտ դարկում էին ափերին և սոսկայի ազազակներով իջնում էին կրկին յետ : Երկինքու գետին կարծես օրհասական պատերազմ էին մտել . . . անտանելի խաւարը պատել էր երկիրը . . . : Բայց ո՞վ է այն՝ լապտերը ձեռին , կանգնել է ժայռի գլխին , ի՞նչ է ուզում , ի՞նչ է պտրում գիշերային նա այս ժամին : Միթէ Հայրենիքի ոգին է , որ խաւարի մէջ խեղդուելով , հազու նշմարելի իւր լոյսն է ցոլացնում . . . այո՛ . . .

— Առա՛ջ , լուսեց ծովափին մի ձայն . — շուտ , շուտ . . .

Չորս հզօր բազուկներ ծովը հրեցին նաւակը և սարսափելի ուժգնութեամբ սկսան առաջ վարել նորան :

— Ա՛ջ . . . մի փո՛քր էլ . . . ուժո՛վ ,

ուժո՛վ , հազիւ լսելի էր լինում զեկավարի ձայնը :

Կատաղած քամին փչում , արիքի լեռներ էր բարձրացնում և շարունակեա ձգում նաւակը . . . : Ահա հազիւ նշմարելի նկատվում է նա կոհակի գազաթին , բայց ահա և սաստկութեամբ իջաւ նա ցած . կարծես ծովը կուլ տուեց նորան . . . :

— Սպասեցէք , կրկին լուսեց հրամանը . վեր առէք տոպրակը :

Թիավարները վայր գրին թիերը և մի ինչ որ տոպրակով ծանր բան դուրս հանեցին նստարանի տակից : Ոչինչ յայտնի չէ . . . բայց . . . կարծես . . . շարժվում է . . .

— Մէկ , երկու , երեք :

Թիավարները տոպրակի չորս ծայրերից բռնած , շարժեցին — շարժեցին , և ուժգնութեամբ ձգեցին ծովը :

— Յետ , կրկին լուսեց հրամանը և թիավարներ նստան իրանց տեղերը :

Ժայռի գլխի լապտերը հաղիւ էր նկատուում խաւարի մէջ : Նաւը դուրս եկաւ ափ . . .

Բայց քամին քանի գնում խաղաղում էր , և վերջապէս բոլորովին դադարեց : Սմպերը հեռացան անցան և երկինքը ծածկուեցաւ անթիւ-անհամար աստղերով : Պայծառ լուսինը խաղաղ իւր շրջանն էր անում . Մովակը լուսաւորուեց նորա աղօտ լուսով և ջինջ կապուտակի մէջ միւս երկինք էր արտափայլում , երկինք՝ որի աստղերն ու լուսինը խաղաղ լողում էին մեզմ տատանմամբ ջրի բիւրաւոր , հազիւ նկատելի կոհակների մէջ : Գիշերային խոր և փառահեղ լուսթեան մէջ միայն ալիքների վէտ առ վէտ ափի ժայռերին զարնուելու մեզմ շրվջվոցն էր լսվում , որոնց մանրագիտական ցայտերը յակինթ ու գոհար էին ցանում ծովը . . . : Ոյժ և եռանդ էր շնչում բնութիւնը , ամեն բան խա-

ղաղ , ամեն բան քայքայ էր թվում . . . երկինք ու գետին գրկախառնուած , զով թարմութեան և օդի անուշ բուրմունքի մէջ կարծես սիրոյ սրբազան ծէան էին սրբագործում . . . :

Խաղաղութիւն , լոյս , հանգստութիւն . կարծես ոչինչ չէր եղել , ոչինչ չէր պատահել . . . :

Ե

Միւս օր առաւօտ ~~կիշերտագահների պաշտօնական ջեկաղման մէջ հետեւեալ տողերն էին գրուած .~~

« . . . գիշերը հանգիստ էր , ոչ մի անկարգութիւն չպատահեցաւ և ոչ մի մարդ չերեւաց փողոցներում . կարգապահութիւնը կատարեալ էր և ոչ մի արտասովոր դէպք տեղի չունեցաւ . միայն Վ***ը , ձեռները ետին կապ , կախուած էր բակի դրան դրսի կողմից , վզին կախուած էր մի տուսակ , « մատնիչի վախճանը » խօսքե-

րով: Իսկ Մ***ը խողխողուած ընկած էր մեծ փողոցի վերայ, կրծքին էլ մի գաշոյն «Լ. Օ.» դրերով...»:

Մի քանի օր յետոյ էլ Ս*** Կ***ի սեւացած և այլակերպուած դիակը տոպրակով Վանայ Մովակից գործ հանեցին ձկնորսները...:

9

.....
.....
.....
.....



ՀՀ Ազգային գրադարան



NL0343296